

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ - ԻՆ/ԵԱՆ ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՇԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

Ս. Ռ. ԱՎԵՏՅԱՆ

Գրաբարյան -իւն/եան (ձիւն/ձեան և այլն) հերթագայության ծագումը հայերենի համեմատական քերականության ամենակենդանոտ հարցերից մեկն է: Լեզվաբանական-հայագիտական գրականության մեջ այդ հարցի վերաբերյալ առաջ են քաշվել երկու տարբեր տեսակետներ: Հ. Աճառյանը գտնում է, որ, ինչպես տուն, շուն, այնպես էլ ձիւն, սիւն և այլն բառերի տան, շան, ձեան, սեան և այլն սեռական-տրականի ձևերը առաջացել են հիմն-հիման հոլովման տիպի համաբանությամբ ա ձայնավոր ստանալու հետևանքով՝ անցնելով *տուան, *շուան, *ձիւան, *սիւան միջին ձևերից: Այլ կերպ ասած՝ -իւն/եան հերթագայության առաջացման հարցում Հ. Աճառյանը ենթադրում է իսա>եա հնչյունափոխություն¹: Ինչ վերաբերում է հիմն-հիման տիպի բառերի սեռական-տրական հոլովաձևերում աւն-ի ծագմանը, Հ. Աճառյանը վերջինս առաջացած է համարում ֆ.-ե. եզ. սեռ. *-n-es և եզ. տր. *-n-ci նախաձևերից՝ իբրև օրինակ վկայակոչելով սանսկ. եզ. սեռ. vīśnas «արուի» և եզ. տր. rajne արքային» հոլովաձևերը²: Գ. Ջահուկյանը գտնում է, որ ինչպես գրաբարյան -ուն/ան, -իւն/ան, -իւն/ուն/ան հերթագայություններում, այնպես էլ -իւն/եան հերթագայության մեջ դրսևորվել են ֆ.-ե. *-n- ձայնորդահանգ հիմքերին բնորոշ հերթագայությունների համապատասխան աստիճանները: Բայց այն հանգամանքը, որ հայերենի համար ֆ.-ե. համապատասխան հոլովաձևերը վերականգնելիս Գ. Ջահուկյանը նշում է նախաձևային մի քանի տարբերակներ (երբեմն հարցական նշանով հանդերձ), կարծում ենք՝ վկայում է այդ խնդրի դժվարության և ոչ այնքան հստակ լինելու մասին: Այսպես, նա իր «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» աշխատության մեջ գտնում է, որ -ն ձայնորդահանգ բառերի սեռ.-տր.-ի, ինչպես և մյուս թեք հոլովաձևերի վրա ա-ն տարածվել է գործիական հոլովից: Ընդ որում, վերջինիս -ամբ, -ամբք կազմությունների մեջ էլ դրսևորվել է ֆ.-ե. *-en/on/ո հերթագայության ստորին(զոռ) աստիճանը՝ *-ո-bhi(s): Գալով -իւն-ով վերջացող ձիւն, սիւն և այլն բառերին, նա գտնում է, որ -եա-ով ձևերը պետք է ծագած համարվեն ֆ.-ե. *ծ/թկամ *ծ/զոռ հերթագայության հետևանքով ստացված *-iyəmbhi կամ *immbhi ձևերից (հետագա վերածմամբ եամբ-ի), կամ էլ թերևս iəmbhi ձևից³: Իր «Հայերենի համեմատական քերականության» մեջ Գ. Ջահուկյանը սեռ.-տր.-ի աւն-ի առաջացման հարցում նորից ենթադրում է գործիական հոլովի ազդեցությունը, բայց միաժամանակ նշում է նաև ֆ.-ե. (shva primum)-ով և ֆ.-ե. (shva secundum)-ով *-ən-c/os, *-ən-c/os սեռականի և * -ən-ci, * -ən-ci տրականի նախաձևեր: Գործիականի -ամբ և -ամբք-ի համար նա վերականգնում է ֆ.-ե. *-ո-bhi, *-əmbhi նախաձևեր⁴: Ջիւն-

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Բ. 3, Եր., 1957, էջ 410:

² Տե՛ս նույն տեղը, էջ 430-431:

³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 179-180, 175:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 207, 176:

⁵ Տե՛ս Գ. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ

ձեան-ձեամբ և սին-սեան-սեամբ հոլովաձևերի համար էլ, համապատասխանաբար, Գ. Զահուկյանը տալիս է հետևյալ նախաձևերը՝ ձին<*ghijōm, սեռ. ձեան<*ghijānos (կամ ghijānos?), գործ. ձեամբ<ghijōmbhi (կամ ghijāmbhi?), սին <*kijōn, սեռ. Kijānos (-nos?), գործ. Kijāmbhi (հարցական նշանները Գ. Զահուկյանին են - Ս. Ա.): Այն հանգամանքը, որ հայերենի նախապատմական, ինչպես և պատմական զարգացման ընթացքում զգալի քանակությամբ բառեր այս կամ այն հոլովման են ենթարկվել համաբանությամբ, կասկած չի հարուցում: Այսպես, հին հայերենում հ.-ե. ունգային աթեմատիկ հիմքերից ծագած գառն<հ.-ե. *vāēn-գառին, գեղմն<*velmō-գեղման և այլն - *ճ* ձայնորդահանգ հիմքերի նման ներքին թեքման են ենթարկվում նաև այնպիսի բառեր, որոնք նախապես պատկանելիս են եղել այլ հիմքերի. հմմտ. հ.-ե. *bher-no > բեռն-բեռին, *swidro > քիրտն-քրտան, *egh > եզն-եզին և այլն⁶: Այդպես էլ ենթադրվում է, որ ալիւր/ալեւր, աղբիւր/աղբեր և այլն բառերի ալեր, աղբեր և այլն ձևերն էլ առաջացել են դուստրդատեր հոլովման տիպի համաբանությամբ *ե*-ներքին հոլովման ենթարկվելու հետևանքով. ալեւր-**ալեւեր*>ալեր, աղբեր-**աղբեր*>աղբեր և այլն⁷ Այդ բացատրությունը մեզ համոզիչ է թվում այն պատճառով, որ գրաբարի հետդասական շրջանում էլ տեղի են ունեցել համաբանական այդ կարգի երևույթներ. հմմտ. փոքր-փոքեր (փոխ. փոքու), ծաղր-ծաղեր (փոխ. ծաղու) և այլն⁸ և հատկապես գրաբ. բլուր բառը, որ նախապես *ո*-հոլովման էր պատկանում, իսկ ավելի ուշ շրջանում այն հանդես էր գալիս նաև *ե*-ներքին հոլովմամբ՝ եզ. սեռ. բլեր, գործ. բլեր և այլն⁹: Կարծում ենք՝ մասնավորապես բլուր բառի ներքին հոլովման ենթարկվելը վկայում է այն մասին, որ ձայնավոր կամ երկբարբառ+ձայնորդ հիմքերով բառերն էլ կարող էին բաղաձայն+ձայնորդ հիմքերով բառերի համաբանությամբ ներքին թեքման ենթարկվել: Այլ հարց է, թե լեզվական փաստերով հիմնավորվու՞մ է *իւս*>*ես* հնչյունափոխությունը և կարո՞ղ էին ձեան, սեան և այլն ձևերը առաջանալ այդ եղանակով: Սակայն, մեր կարծիքով, լեզվական փաստերը ցույց են տալիս, որ թե՛ հին հայերենում բառափոխության ու բառակազմության ժամանակ, և թե՛ հայերենի նախագրային շրջանում *իւս*-ն տվել է *ուս*, բայց ոչ *ես*. հմմտ. մի կողմից՝ գրաբ. հովի-**հովիւս*>հովուսց, պատի-**պատիւս*-վոր>պատուավոր, **պատիւական*>պատուական, մյուս կողմից՝ գրաբ. տուար «արջառ»բառի ծագումը: Այդ բառի համար վերականգնվում է հ.-ե. *dipəro նախաձև, որը, հայերենի հնչյունական օրենքներից համապատասխան, տվել է նախ **տիւար*, իսկ վերջինս էլ *իւս*>*ուս* հնչյունափոխությամբ՝ տուար: Ուստի, մեր կարծիքով, հին հայերենի ձեան, սեան և այլն ձևերը չէին կարող առաջանալ **իւս*>*ես* հնչյունափոխությամբ: Ինչ վերաբերում է հիմն-հիման հոլովման տիպի սեռ.-տր.-ի համար Հ. Աճառյանի նշած հ.-ե. *n-es, *n-ei նախաձևերին, կարծում ենք, տվյալ դեպքում հ.-ե. *n-ից հայերեն *ան*առաջանալ չէր կարող, որովհետև հ.-ե. *ո>հայերեն *ան* անցումը հայերենի նախագրային շրջանում պետք է տեղի ունեցած լիներ վերջնավանկերի թուլացումից ու անկումից առաջ¹⁰:

Ըստ այդմ, հ.-ե. սեռ.-տր.-ի վերջավորությունների անկումից հետո **ո*>*ո*>*ան* անցում հնարավոր չէր լինի: Գրաբարյան սեռ.-տր.-ի, ինչպես և մյուս թեք հոլովա-

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 108:
⁷ Տե՛ս Գ. Զահուկյան, Հին հայերենի..., էջ 255, 315-316
⁸ Տե՛ս Գ. Զահուկյան, Ազվ. աշխ., էջ 172-173, Հ. Աճառյան, Լիակատար..., հ. 3, էջ 416, հ. 6, էջ 229:
⁹ Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 184:
¹⁰ Տե՛ս Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. 1, էջ 455, Գ. Զահուկյան, Ազվ. աշխ., էջ 173, Ս. Ղազարյան, Ազվ. աշխ., էջ 184:
¹¹ Տե՛ս Ս. Ավետյան, Հ.-ե. լեզուներում ձայնավորների հերթագայության հին և նոր շերտերի քննության փորձ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, № 1, էջ 120:

ձևերի *աճ*-ի առաջացման հարցում մեզ համոզիչ է թվում գործիական հոլովի ազդեցությունը (ինչպես այդ մեկնաբանված է Գ. Ջահուկյանի կողմից): Իսկ գրաբարյան սեռ.-տր.-ի *աճ*-ը հ.-ե. **n-es*, **n-ei* հոլովաձևերից առաջացած համարելու դեպքում, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլիներ միմյանց հետ հերթագայվող հ.-ե. **n-es/ո-es*, **n-ei/ո-ei* տարբերակներ ենթադրել և հայերենի համար իբրև նախատիպեր դիտել **ո-es*, **ո-ei* ձևերը: Հնարավոր է, որ այդպիսի **ո/ո* հերթագայության արդյունքում է առաջացել նաև հ.-ե. ունգային միջածանցավոր հիմքերից ծագող գրաբ. լք-անե-լ, գտ-անե-լ և այլն բառերի *աճ*-ը, այլ կերպ ասած՝ հ.-ե. **linek>likne/likne>* լքանե-լ, **wined>*widne/widne>* գտանե-լ: Այստեղ մենք նկատի ունենք այն հնարավորությունը, որ հ.-ե. ձայնորդները վանկարար արժեքով կարող էին հանդես գալ նաև հաջորդող ձայնավորից առաջ: Կ. Բրուզմանը, մեր կարծիքով, համոզիչ կերպով ցույց է տալիս, որ հ.-ե. **y/iy*, **w/uw* հերթագայություններին զուգահեռ նույնպիսի պայմաններում տեղի են ունենում **r/r*, **l/l*, **ո/ո*, **ո/ո* հերթագայությունները (Բրուզմանի նշանակմամբ՝ *r/r*, *l/l* և այլն)¹²:

Ինչպես վերը տեսանք, գրաբ. սեռ.-տր.-ի *աճ*-ի առաջացման հարցում Գ. Ջահուկյանը հնարավոր համարելով գործիականի համարանական ազդեցությունը, միաժամանակ *աճ*-ի համար հ.-ե. **-ən-e/os*, **-ən-e/os* սեռականի և **-ə n-ei*, **-ən-ei* տրականի նախաձևեր է նշում: Հ.-ե. **-ə n-e/os*, **-ə n-ei* (*shva primum*)-ով ձևերը համապատասխանում են հ.-ե. գործիականի համար Գ. Ջահուկյանի նշած **-əmbhi* ձևին, ուստի այդ մասին կխոսենք ստորև: Ինչ վերաբերում է (*shva secundum*)-ով **-ən-e/os*, **-ən-ei* ձևերին, մեզ ավելի համոզիչ է թվում լեզվաբանության մեջ արտահայտված այն տեսակետը, որ *shva secundum*-ի գոյությունը անհրաժեշտ չափով չի հաստատվում լեզվական փաստերով (իսկ ենթադրյալ ձևերը ավելի շուտ համաբանության արդյունք են)¹³:

Գալով հայերեն գործիականի *-եսմք*-ի, ինչպես և *ամք*-ի համար Գ. Ջահուկյանի կողմից վերականգնված հ.-ե. համապատասխան հոլովաձևերին, կարծում ենք՝ Գ. Ջահուկյանն այս դեպքում նախաձևային մի քանի տարբերակներ է առաջարկել (երբեմն էլ հարցական նշանով հանդերձ) այն պատճառով, որ կասկածահարույց են թվում ու հատուկ քննության կարիք են զգում, մասնավորապես, հետևյալ երկու հարցերը.

1) Կարո՞ղ էին **iyōn*, ինչպես և **ēn*, **ōn* նախաձևերի դեպքում **ō/qron*, **ē/qron* հերթագայություններին զուգահեռ տեղի ունենալ նաև **ō/ə*, **ē/ə* հերթագայություններ:

2) Հերթագայության զրո աստիճանում պահպանվո՞ւմ էր **iyōn*-ի **y*-ը ունգային ձայնորդից առաջ, թե՞ դուրս էր ընկնում:

Ինչպես հայտնի է, հ.-ե. **ō/ə*, **ē/ə* հերթագայությունները սկզբունքորեն տեղի էին ունենում այն դեպքում, երբ **ō-n* և **ē-n* ոչ թե ներկայացնում էին **ō* և **ē* ձայնավորների հերթագայության երկար աստիճանները, այլ հանդես էին գալիս որպես հերթագայության լիաձայն աստիճանի ձայնավորներ¹⁴: Սակայն, հ.ե. **n*- ձայնորդահանգ բառերի ճնշող մեծամասնության դեպքում **ē-n* և **ō-n* ներկայացնում են **ē* և **ō* ձայնավորների հերթագայության երկար աստիճանները (այդ հաստատվում է ցեղակից լեզուներում վկայված ինչպես **ē/ē*, **ō/ō* հերթագայություններով, այնպես էլ ձայնդարձի զրո աստիճանի մնացորդներով. հմմտ. լատ. *caro* «միս», եզ. սեռ. *carnis*, հուն. ἄρνην «գառ, խոյ», եզ. սեռ. ἄρνος, սանսկ. *uksā*

¹² St' u K. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indo-germanischen Sprachen Bd. I. Strassburg, 1897, էջ 399-400, 264-265, 456:

¹³ St' u Сравнительная грамматика германских языков, М., 1962, № 2, էջ 239-240:

¹⁴ St' u A. Meillet, Introduction à l'étude comparative des langues indoeuropéennes, Paris, 1908, էջ 132-133, O. Szemernyi, Einführung in die vergleichende Sprachwissenschaft, Darmstadt 1970, էջ 81-82:

«ցուլ», եզ. սեռ. uksnas և այլն): Հ.-ե. ոնգային հիմքերի *Շ-ը և *ծ-ը մնացած դեպքերում առաջանում են թեմատիկ հիմքերից -*en և -*on ածանցներով նոր բառեր կազմելիս -*e+en>են, *o+on>ոն ձուլման հետևանքով: Բայց այդ եղանակով առաջացած *Շ-ը և *ծ-ը հերթագայության չեն ենթարկվում¹⁵: Իհարկե, *Շ և *ծ ձայնավորների երկար աստիճանները ներկայացնող *Շ-ը և *ծ-ը առանձին դեպքերում կարող էին համաբանության հետևանքով հերթագայվել թ-ի հետ: Բայց գրաբարյան ձեամբ, սեամբ և մման ձևերի առաջացումը բացատրելու համար համաբանական այդ կարգի հերթագայությունն ենթադրելու անհրաժեշտությունն չկա այն պատճառով, որ *ծ/թ հերթագայությունը, և մասնավորապես թ-ը, կարծում ենք՝ տվյալ դեպքում վճռորոշ դեր խաղալ չէր կարող: Եթե *ghiyōm, *kiyōn և այլն ձևերի հերթագայության գրո աստիճանում *i-ից հետո պահպանվում էր *y-ը, ապա հայերեն ձեամբ, սեամբ և այլն ձևերը, ինչպես ստորև կտեսնենք, կարող էին առաջանալ նաև առանց թ -ի: Իսկ եթե հերթագայության գրո աստիճանում *y-ը դուրս էր ընկնում, այդ դեպքում թ-ն էլ հայերեն *ա* տալ չէր կարող, որովհետև Բ.-ե. *iə տալիս է երկար *ի*, ինչպես, որ *uə > *ւ*, *ŋə > *ն* և այլն¹⁶: Հ.-ե. *-iyōn-ի հերթագայության գրո աստիճանում *y հնչյունի վերաբերյալ վերոհիշյալ երկ-ստանդն առաջանում է այն պատճառով, որ *-iyōn-ի *y-ը և, ասենք, *treyes «երեք»-ի *y-ը գործառնությանից բոլորովին տարբեր արժեքներ ունեն (ճիշտ ինչպես *uə-ի *w-ը և *ew, *ow կապակցությունների *w-ը): Եթե *ew, *ey, *ow, *oy կապակցությունների դեպքում *w-ը և *y-ը բաշխման հարաբերության մեջ են գտնվում երկբարբառի երկրորդ բաղադրիչ *i և *u տարբերակների հետ, ապա *uə և *iy հնչյունակապակցությունների դեպքում *w-ը և *y-ը առաջանում են միայն հաջորդող ձայնավորից առաջ որպես *i, *u ձայնավորների և հաջորդող մի այլ ձայնավորի միջև արտասանվող միջանցումային հնչյուններ, որոնք հնչյութաբանական ինքնուրույն արժեք չունեն. Բ.՝ *kleu/klu>սանկ. ՏՐՍ «լսել» արմատից պերֆեկտ մեդիում-պասիվի եզ. I դեմքի ձևը ՏՍ-ՏՐՍ-Ե, բայց եզ. II դեմքի ձևը ՏՍ-ՏՐՍ-ՏԵ, կամ Բ.-ե. *klei/kli>սանկ. ՏՐԻ «ուղղվել, ուղղություն վերցնել» արմատից աորիստի հոգ. III դեմքի ձևը a-ՏՐԻ-ԱՆ և այլն: Բնականաբար, հարց է առաջանում, թե հերթագայության գրո աստիճանում, երբ անհետանում է *i և *u ձայնավորներին հաջորդող ձայնավոր հնչյունը, *y և *w միջանցումային հնչյունները պահպանվո՞ւմ են, թե՞ իբրև ավելորդ նորից դուրս են ընկնում: Մեր կարծիքով, այդ հարցը և դրա հետ կապված՝ գրաբ. -*եսմբ(թ)*-ի ծագումը կարելի է պարզել՝ հենվելով մի կողմից՝ սանկ. švā «շուն», հոգ. գործ. švabhis հոլովաձևերի վրա, որոնք համապատասխանաբար ծագում են Բ.-ե. *k̄wōn, *k̄v̄ṛbhis ձևերից, մյուս կողմից՝ սանկ. yuvan-«երիտասարդ», հոգ. գործ. yuvabhis ձևերի վրա, որոնք ծագում են Բ.-ե. *yuwe/on-, *yuv̄ṛbhis ձևերից: Այս դեպքում, կարծում ենք, սանկ. yuvan-, yuvabhis, ինչպես և եզ. սեռ. yūnas «երիտասարդ» ձևերի փոխհարաբերությունը հաշվի առնելով՝ կարելի է սահմանել հետևյալ օրինաչափությունը. *հերթագայության գրո աստիճանում Բ.-ե. միջանցումային *y և *w հնչյունները պահպանվում են հաջորդող ձայնորդից առաջ, եթե վերջինս կարող է վանկարար արժեք ձեռք բերել*: Մյուս կողմից՝ yūnas-ի *ū*-ի ծագման վերաբերյալ, կարծում ենք, վերջնական եզրակացության հանգելու համար հարկավոր է պարզել.

1) այս դեպքում մենք գործ ունե՞նք երկվանկ set արմատի հետ և ըստ այդմ *ū*<*uə*-ից (հմմտ. սանկ. švašrūh «կեսուր», ընդ որում ձայնավորից առաջ ձուլում տեղի չի ունենում և *ə*(շվան) դուրս է ընկնում, ուստի եզ. սեռ. švašruv-ah, նույնպիսի՞ պատճառով էլ yūnas-ի դիմաց yuvan-),

¹⁵ Տե՛ս Գ. Джаукян, Сравнительная..., էջ 110, Գ. Զահուկյան, Հին հայերենի..., էջ 163, A. Meillet, նշվ. աշխ., էջ 231, 266:
¹⁶ Տե՛ս O. Szemerényi, նշվ. աշխ., էջ 83-85:

2) թե՞ մենք yuvan-ի դեպքում գործ ունենք միավանկ anit արմատի հետ, և այդ դեպքում yūnas-ի ü-ն ծագում է հերթազայության զրո աստիճանում բաղաձայն ձայնորդից առաջ u-ի և w միջանցումային հնչյունի ձուլումից՝ u+w>ū: Այս հարցը հետագա քննության կարիք է զգում, իսկ տվյալ դեպքում մեզ համար կարևոր է yuvabhis ձևի ծագումը < և. -ե. *yuwṛbhis նախաձևից:

Պետք է նկատի ունենալ, որ և. -ե. *y և *w միջանցումային հնչյունները ցեղակից լեզուների մի մասում ընկել են կամ շատ թույլ են արտասանվում ու որպես այդպիսին չեն գիտակցվում, իսկ լեզուների մյուս մասում վերոհիշյալ հնչյունները գիտակցվում են որպես այդպիսին, ուստի գրավոր արտահայտություն են ստանում. հմմտ. և. -ե. *patriyos «հայրական» > հուն. πατριος, լատ. Patrius, բայց սանսկ. pitriyas և այլն: Չնայած դրան, *y և *w-ի երբեմնի բաղաձայնական ազդեցությունը հաջորդող ձայնորդի վրա զգացվում է նաև այն լեզուներում, ասենք, լատիններենում, որտեղ դրանք չեն գիտակցվում որպես այդպիսին ու գրավոր արտահայտություն չեն ստանում. հմմտ. լիտ. kruvinčas, լատ. cruentus «արյունոտված», որոնք ենթադրում են և. -ե. *kruwṛtos նախաձև: Բացի այդ, լատիններենի վաղ շրջանում վերոհիշյալ հնչյունների բաղաձայնական ազդեցությունը ենթադրվում է նաև շնորհիվ այն բանի, որ հնագույն տեքստերում հանդիպող fidi «եղավ», insti-cū «դրեցի, հաստատեցի», Dīāna և այլն ձևերում»՝ «vocalis ante vocalem corripitur՝ ձայնավորը ձայնավորից առաջ կարճանում է» (հմմտ. լատ. venī-re «գալ» բայից ներկայի I դեմքի ձևը venīo «գալիս եմ» և այլն) լատիններենին բնորոշ հնչյունական օրինաչափությունը չի գործում, թեև այդ ժամանակ արդեն այն ուժի մեջ է եղել:

Գալով գրաբ. -եամբ(p) ձևին՝ կարծում ենք՝ վերջինս առաջացել է նույնպիսի օրինաչափությամբ, ինչպես սանսկ. yuvabhis-ը: Ինչպես որ և. -ե. *yuwe/on-ի հերթազայության զրո աստիճանում պահպանվում էր միջանցումային *w հնչյունը, իսկ հաջորդող ուղայինը վանկարար արժեք էր ձեռք բերում՝ *yuwṛbhis>սանսկ. yuvabhis, այդպես էլ և. -ե. *iyōn-ի դեպքում (*ghiyōm և այլն) հերթազայության զրո աստիճանում պետք է պահպանվեր միջանցումային *y հնչյունը, իսկ հաջորդող ուղայինը, համապատասխանաբար, պետք է վանկարար արժեք ձեռք բերեր՝ *iyṛbhi(s) (*ghiyṛbhi(s) և այլն): Վերջինս օրինաչափ կերպով պետք է տար գրաբ. -եամբ(p) (ձեամբ(p) և այլն)՝ միջձայնավորային դիրքում y-ի անկման (կամ այլ կերպ՝ արտասանության չեզոքացման) և *hu>tu հրնչյունափոխության արդյունքում (հմմտ. և. -ե. *giya/ə-na>գրաբ. կեան(ք)-կենաց): Բացի այդ, հաշվի առնելով և. -ե. *w/uw, *y/iy և այլն հերթազայությունները (հմմտ. և. -ե. *dwō/duwō «երկու» տարբերակները, որոնցից առաջինը տվել է հուն. *δFω>δω(δεκα) «տասներկու», իսկ երկրորդը՝ հուն. δω«երկու»)՝ կարծում ենք, և. -ե. *iyōn-ի դեպքում էլ կարելի է ենթադրել *yōn/iyōn հերթազայության հնարավորությունը: Ընդ որում, *yōn-ի գործիականն էլ պետք է լիներ *yṛbhi(s) (հմմտ. սանսկ. śvabhis<և. -ե. *kṛbhis - *kṛōn «շուն»): Սակայն, *yōn/yṛbhi(s) տարբերակից գրաբ. -իւն/եամբ(p)-ի առաջացումը քիչ հավանական է, եթե նկատի ունենանք, որ և. -ե. *y-ը հետբաղաձայնային դիրքում հայերենի նախագրային շրջանում բավական բարդ ճակատագիր է ունեցել ու հաճախ անհետացել է փոխազդեցական հնչյունափոխության արդյունքում»:

Այսպիսով, մեր կարծիքով, հին հայերենի -իւն հոլովաձևը ծագում է և. ե. -iyōn նախաձևից, իսկ գործիականի -եամբ(p) հոլովաձևը՝ և. ե. -iyṛbhi(s) նախաձևից: Ինչ վերաբերում է եզ. սեռ-տր. -ի, ինչպես և մյուս թեք հոլովաձևերի -եան-ի ծագմանը, մեզ համոզիչ է թվում Գ. Զահուկյանի վերը նշված այն տեսակետը, որ գործիականի ձայնավորումը համաբանությամբ տարածվել է մյուս թեք հոլովաձևերի վրա:

¹⁷ St' u. И. М. Тронский, Историческая грамматика латинского языка, М., 1960, էջ 95:

¹⁸ St' u. Г. Джаукян, Сравнительная..., էջ 58-62, 71-72:

С. Р. АВЕТЯН - *Новый опыт генетического рассмотрения древнеармянского чередования - iwп/ean*. - Происхождение древнеармянского чередования iwп/ean (jiwп/jean и т.д.) является одним из проблематичных вопросов сравнительной грамматики армянского языка. Автор статьи полагает, что генетическое рассмотрение данного чередования тесно связано с интерпретацией происхождения древнеармянской формы творительного падежа на -eanb(K̄). Опираясь на соответствующие данные родственных языков, делается попытка обосновать возможность существования и-е. праформы *-iyumbhi(s) и возвести форму творительного падежа на -eanb(K̄) древнеармянских слов на -iwп к данной праформе. Одновременно учитывается возможность аналогического распространения огласовки творительного падежа на другие косвенные падежи, которую выдвигает Г. Джаукян.